ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 06 >> սեպտեմբեր 2021թ. ՆՄՈ/344-2021

Ք. Արմավիր

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դողս համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 2021 թվականի օգոստոսի 5-ի N109 գրությունը, Դողս համայնքում հողային հարաբերությունների ոլորտին առնչվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օգտագործման իրավական հիմքերի ուսումնասիրություն իրականացնելու նպատակով.

որոշում եմ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավարին (Լ. Հարությունյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 5 աշխատանքային օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քարտուղարության վարչատնտեսական բաժնի պետին (Ա. Համբարձումյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքների կազմակերպման համար տրամադրել ծառայողական հերթապահ ավտոմեքենա:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին (Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 06.08.2021 11:48:22 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2021 թվականի օգոստոսի 06 -ի
ՆՄՊ/344 -2021 որոշման

Կազմ
աշխատանքային խմբի

Աշխատանքային խմբի ղեկավար՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ-գլխավոր իրավաբան՝ Լիաննա Հարությունյան

Աշխատանքային խմբի անդամներ՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ՝ Գոռ Հովհաննիսյան

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ՝ Արթուր Պողոսյան

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության ավագ մասնագետ՝ Սեդա Չալյան

Գլխավոր քարտուղար՝ ***Ա. Հովհաննիսյան***

Недействительная подпись

VERIFIED OCSP 06.08.2021 11:30:08 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023